ՆՈՐ-ԴԱՐ

№ 131 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 21 Սեպտեմբերի 1902 Շաբաթ, 21 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 131

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամներ՝ ժամը կրկնապատիկ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԸ

յայտարարում է ի գիտութիւն պ.պ. ընտրողների, որ Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասութիւնների ընտրութիւնները ընտրողական առաջին թաղի համար նշանակուած են 1902 թուի սեպտեմբերի 22-ին «Թիֆլիսի ժողովարանի» ամարայլին այգում, Մէրքայէլեան փողոցում։

Ընտրողական ժողովը մանելու համար տոմսակներ տալը կըշռանակուի բաց. վարչութեան գիւանատանը մինչև սեպտեմբերի 21-ը, իսկ ընտրութիւնների օրը տոմսակները կըտրուեն նոյն իսկ «Թիֆլիսի ժողովարանի» այգում առաւօտեան ժամը 10-ից մինչև օրուայ ժամը 1-ը, որից յետոյ ընտրողական ժողովը նոր եկողներից ոչ ոքի թոյլ չի տրուիլ մասնակցել քուէարկութեանը։

(1013) 3—3

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան երկաթուղիների վարչութիւնը յանդգնում է այն անձերին, որոնք երկաթուղիների ապենտներին վճարում են օրեկ լրացուցիչ տուրք կամ տուրքերի պակաս մնացած գումարները, անպատճառ պահանջել տուրքերն առնող ապենտներից սահմանուած անդորրագրեր ի հաստատութիւն փողերի վճարման, որովհետև այդպիսի անդորրագրեր չստանալուց կարող են առաջանալ չհիւրհմացութիւններ և տուրքերը կըզպահանջուեն երկրորդ անգամ։

(1009) 5—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Առաջ և յետոյ։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են. — Թելաւից։ Մոսկուայից։

Նամակ խմբագրութեան։

Մամուլի շուրջը։

Եկեղեցական ժողովներ Սուրմ և Ատանայում։

Թղթակցութիւն. — Ագարակ գիւղ։ Նամակ Թուրքիայից, Վան։

Քաղաքական. — Թուրքիա։ Միացեալ նահանգներ։ Իտալիա։ Բելգիա։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 20 սեպտեմբերի 1902 թ.

ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՑ

—

Ձիպկայի բարձունքի վրայ բուլղարները իրենց ազատող ազգի և զօրքի նշանաւոր ներկայացուցիչների ներկայութեամբ կատարեցին այս օրերս իրենց ազատութեան և անկախութեան հաղուագէպ տօնը։

Հեռագրերից ընդհանրացրած տեղեկացաւ այդ խորհրդաւոր տօնի և դրա առթիւ կատարուած հանդիսի մանրամասնութեանց հետ։ Ձիպկայի ստորոժում կառուցուած է ազատութեան համար արիւն թափողների յիշատակին մի տաճար, որի օծումը կատարուեց այս օրերս։

Բուլղարական մատաղ սերունդը չի կարող լիովին ըմբռնել և զգալ այդ տօնի մեծ խորհուրդը, այդ կըզգան աւելի նրանք, այն բուլղարները, որոնք ծնուել և մեծացել են նախկին մահմեդական օտար իշխանութեան տակ և վայելել են նախկին բեժիմը.

Սրանից մի 25 տարի առաջ խեղճ, մեծ մասամբ խաչնարած, երկրագործ բուլղար ժողովուրդը կրում էր օտարի, բռնութեան ծանր լուծը, մի լուծ, որ հինգ հարիւր տարիների անցեալ ունէր։

Մէկ հարուածով սուրիւթեան չղթաները կործանուեցան, անյայտութեան և կորստեան մատնուած խեղճ ժողովուրդը միմութիւնից լոյս աշխարհ դուրս եկաւ, կենդանացաւ, ազատ օդ շնչից և սկսեց ապրել։

Այժմ այդ ժողովուրդը կայ, այժմ գոյութիւն ունի բուլղարական պետութիւնը, բուլղարական իշխանութիւնը. Բուլղարիան յառաջադիմում է։

Սրանից 25 տարի առաջ, 1877-ին Կայսր Ալէքսանդր երկրորդը այլևս չտանելով ռուսաց ազգակից և հաւատակից բուլղար ժողովրդի կրած հալածանք. և տառապանքը սուրը հանեց բուլղար ժողովրդին ճնշողների դէմ։ Մեծ Կայսրին հետևեց ամբողջ Ռուսիան ռուսաց զօրքերը անցան սահմաններից՝ երկամի չղթաները պէտք է կործանուէին երկաթով և ազատութիւնը պիտի գնուէր արիւնով։

Կայսրը, որին ժողովուրդն իրաւամբ անուանում է Հայր-Ազատիչ, իւր անօրինակ մեծահոգութեամբ փրկեց մի կործանուող ժողովուրդ։

Ինչ կուզէ խօսեն և գրեն Բուլղարիայի սրճարանների-պոլիտիկանները, բուլղարական ժողովուրդը միշտ երախտապարտ պէտք է լինի ռուսաց և ռուս զէնքին. առանց ռուսների բուլղարները կըմնային նախկին դրութեան մէջ և կըտառապէին մահմեդական լծի տակ. Բուլղարիան գոյութիւն չէր ունենալ։

Այն խաչը որ տնկուել է Ձիպկայի վրայ ռուսաց ձեռքով, դա ազատութեան խաչն է, որ պէտք է յիշեցնէ բուլղարներին իրենց անցեալը և ներկան։

Ազգերի պատմութիւնն ազգերի ամենալաւ և փորձուած առաջնորդն է։

1877—78 թուականների պատերազմը և այդ պատերազմի հետևանքը և այնուհետև մինչև այս օրերս աշխարհիս վրայ ազգերի մէջ տեղի ունեցող պատերազմները ցոյց են տալիս մի շատ պարզ բան, որ փոքրերը միմիայն զօրաւորների հաճութեամբ և օգնութեամբ կարող են իրենց գոյութիւնը պահպանել և յառաջադիմել. հակառակել այդ բանին, նշանակում է ոչնչ չհասկանալ, նշանակում է պատմութիւնն անտես անել։

Նրանք, որոնք պատմութիւնը կարդում են միմիայն իրենց ջղերը գրգռելու և առօրեայ, սովորական հետաքրքրութեանը յագուրդ տալու համար, շատ քիչ բան են կարդում և աւելի քիչ բան սովորում. պատմութիւնը պէտք է կարդալ՝ նրանից խրատուելու և առաջնորդուելու համար։

Եթէ լաւ սովորենք թէ ինչ է եղել առաջ, այնքան էլ մարդարէ լինելու կարիք չկայ, իմանալու համար թէ ինչ կըլինի—յետոյ։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

— Վաղը, կիրակի, սեպտեմբերի 22-ին նշանակուած են Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասութիւնների ընտրութիւնները ընտրողական առաջին թաղի համար, որի մէջ մտնում են ոստիկանական 1, 2, 3 և 4-րդ քաղամասերը։ Ընտրողական ժողովը պիտի գումարուի Թիֆլիսի ժողովարանի ամարայլին այգում։

— Կոյրուհամբերի խնամակալ հոգարարձութեան Թիֆլիսի ճիւղի խորհուրդը որոշել է կոյրուհամբերի ուսումնարանը Թիֆլիսում բանալ հոկտեմբերի 1-ին։ Ընդունւում են միայն Թիֆլիսի նահանգի բնակիչների երկսեռ երեխաները 11 ից մինչև 12 տարեկան։ Ուսումնարանին կից պանսիօն բանալու գործը, «Նով. Օբ.»-ի ասելով, յետաձգուած է առժամանակ։ Առայժմ ընդունուած է 12 աշակերտ-աշակերտուհի։

—Լուսաւորութեան մինիստրութեան մէջ, մայրաքաղաքի թերթերի ասելով, խնդիր է յարուցուած քաղաքային դպրոցներն աւարտող աշակերտներին ընդունելու միջնակարգ դպրոցների ստորին դասարաններում առանց քննութեան և քաղաքային դպրոցների ուսման ծրագրի մէջ մացնելու նոր լեզուներ իբրև ոչ-պարտադիր առարկայ։

—Բազուի նաւթարդիւնաբերողների XVII հերթական համաժողովը նշանակուած է այս տարի նոյեմբերին։

—Պետերբուրգում դումարուած կրիմինալիստների միջազգային համաժողովի անդամները մի ուղևորութիւն են կատարում դէպի Ղրիմ և Կովկաս։

—Անգլիայի դրամատէր գԱրթի, «Գասպի»-ի ասելով, պարսից շահի Լոնդոնում եղած ժամանակ նորին մեծութիւնից արտօնութիւն է ստացել Պարսկաստանում նաւթահանքեր շահագործելու համար։

— Այս օրերս կայացաւ Անդրկովկասի ռուսաց հոգևոր դպրոցների տեսուչների համաժողով կրթական մի քանի խնդիրների մասին խորհրդակցելու համար։ Համաժողովը, ի միջի այլոց, անհրաժեշտ է դատել 1) յարմարեցնել տեղական պայմաններին դպրոցական ծրագրերն այնպէս, որ տեղացի ոչ-ռուս աշակերտները հեշտութեամբ կարողանան ըմբռնել դասերը և 2) նոյն աշակերտներին ռուսերէնին վարժեցնելու համար, հիմնել հանրակացարաններ, որտեղ աշակերտները, չարունակ դասատուների հսկողութեան տակ գտնուելով, միշտ ռուսերէն խօսեն։

— Սեպտ. 22-ին օրհնուելու է գեղեցիկ արհեստները քաջալերող Կովկասեան Ընկերութեան նոր կացարանը, որտեղ և բացուելու է գեղարուեստի արտադրութեանց մնայուն ցուցահանդէսը։

—Այս ձմեռ, ինչպէս յայտնի է, արքունական թատրոնում ներկայացումները չեն լինելու։ Վրաց ազնուականների բանկի թատրոնում սեպտ. 19-ից Գունոյի «Փաուստ» օպերայով բացուեց Խարկովի մասնաւոր գերասանական խմբի օպերների ներկայացումն անորիպրինեօր Ներսիթեանց զեկավարութեամբ։ Խմբի անդամները՝ երգիչներն բոլորն համարեա թէ անծանօթ են Թիֆլիսին։ Թատրոնը լիքն էր, ներկայացումը և երգեցողութիւնը միջակ։ Երևի վերջը կը գան յայտնի երգիչներ։

—Կարգադրուած է, որ անդրկովկասեան երկաթուղիների պահապանները իրենց պաշտօնը կատարելու ժամանակ զինուած լինին։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին է թողնուած որոշել, թէ պահապանները այդ երկաթուղիների որ մասերի վրայ պէտք է զինուին։

—«Ձերնոմ. Վեստ.»-ի ասելով, Բաթումում տեղեկութիւն է ստացուած, որ Կ. Պոլսում սեպտեմբերի սկզբներին կասկածելի հիւանդութեան երկու դէպք է երևացել։

—Հինգշաբթի, սեպտ. 19-ին, արտիստիական ընկ. Թատրոնում հայոց գերասանական խմբի երկրորդ ներկայացումն էր. խաղացին «Բարեկամները», դրամա 3 գործ. Նոր Թարգ. պիէսը և Մոլիէռի՝ «Սկապենի՝ արարքը» կոմեդ. 3 արար. «Բարեկամների» մէջ հօր և հասարակական գործիչի դերակատար Աբելեանը լաւ կատարեց իւր դերը. այդպիսի կողբեկտերդերներ աւելի յարմար է նրան. հասարակութիւնը շատ ծափահարեց նրան և երևում էր, որ ամենքը գոհ էին ներկայացումից։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԹԵԼԱՒԻՑ.—Թէլաւում գոյութիւն ունեցող քաղաքային ուսումնարանը, որտեղ սովորում են, ի միջի այլոց և հայեր, զժբաղտաբար կուրկ է հայ կըթօնուսոյց քահանայից. դպրոցում երկար տարիներ պաշտօն վարող կրօնուսոյց քահանան հեռացրած է դպրոցից իւր կատարած մի զեղծման համար, որի մանրամասնութիւնը գրուած է «Նոր-Դար»-ի 1901 թ. № 158-ում։ Այժմ քաղաքային դպրոցի պ. տեսուչը դիմել է տեղիս հայոց գործակալին, որ հեռացրած կրօնուսոյցի տեղ նշանակուի մի հասկացող և բարոյական քահանայ կրօն և հայոց լեզու աւանդելու համար։ Հայը գործակալը այս մասին դիմել է պաշտօնապէս Թիֆլիսի հայոց կոնսիստորիային լսնդրելով անօրէնութիւնն; բայց, զժբաղտաբար, կոնսիստորիան չնայելով խնդրի կարեւոր լինելը, մինչև այսօր դեռ ոչ մի պատասխան չէ տուել։ Վերոյիշեալ պաշտօնը ստանձնելու համար թէպէտև Թելաւում կայ արժանաւոր քահանայ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, բայց նա մերժել է ստանձնել այդ պաշտօնը։ Ցաւալին, վերջապէս կոնսիստորիան ևրը կըբարեհաճի պատասխանել։

—Անցեալները յայտնել էինք, որ Թելաւում և նրա շրջակայքում հունձը առատ լինելով գիւղացիք մեծ գոհունակութեամբ տեղաւորեցին իրենց ամբարներում ցորենները. Թէև Գախեթում ապրուստի ամենագլխաւոր միջոցը այգիների բերքն է, սակայն օգոստոսի առատ անձրևները մասամբ ոչնչացրին խաղողը։

Նորից երևեցաւ եղջիւրաւոր անասունների մէջ ժանտախտը, որը բաւականին վնաս հասցրեց առանց այն էլ վնասուած գիւղացիներին։ Հիւանդութիւնը չարունակւում է և նրա առաջն առնելու համար Թիֆլիսի պ. նահանգապետի կարգադրութեամբ նշանակուած է անասնաբոյժ Լիվիցկի և Ջաւուր բէգ. այդ հիւանդութիւնները մեծ մասամբ տարածուած են Գոմբորում (Թէև Գոմբորը Թելաւի գաւառ չէ), Թէթրի-Ծղրէքի գիւղում՝ Թելաւից դէպի արևմուտք և Ուրիախ-ուբանի գիւղում՝ Թելաւի արևելեան կողմը։ Քըժիշկ Լևեցկի և Ջաւուր բէգը խիստ կարևոր միջոցներ են ձեռք առել և չարունակաբար գեղերն են սրսկում հիւանդոտ անասուններին և ամեն չանք գործ են դնում չուտով բժշկել։ Օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 8-ը Թէթրի-Ծղրէքում սպանուած են ութը անասուններ, իսկ Ուրիախ-ուբանում հսկողութեան տակ պահուած են 14 եղջիւրաւոր անասուններ, որոնց և պէտք է սպանեն Լիվիցկու խորհրդով։ Ցաւով ենք, որ պ. Լիվիցկու չընորհիւ հիւանդութիւնը չուտով կըվերջանայ և խեղճ գիւղացիք կազատուին մի չարք դառնութիւններից։

—

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ.—Հայրենիք վերադարձող գաղթականների օգտին բացուած ժողովարարութիւնը ոչ մի կերպ չի կարելի անուանել յաջողակ, ինչպէս այդ մասին «Նոր-Դար»-ին լուր էր հաղորդուած Մոսկուայից. ընդհակառակն առած նուէրները ծխականների կողմից շատ չնչին են և այդտեղ աւագ քահանայ Պոպովիանի յորդորանքը ոչ մի ցանկալի ազդեցութիւն չի արել։

—Ուսումնական տարուայ սկզբին, ինչպէս միշտ, այս տարի էլ նկատւում է ուսանող սերնդի երկու սեռի մեծ բազմութիւն Մոսկուայում. մեծամասնութիւնը Կովկասի քաղաքներից ու գաւառներից և, որ գլխաւորն է, չքաւոր դասակարգից է։ Օգնութեան պահանջը մեծ է, և ուրախալի է, որ տեղիս կանանցից կազմուած յատուկ մասնախումբը ոչ մի նիւթական և բարոյական չանք չի խնայում օգնելու իւր սեռի խնդրառուներին, իսկ Գասպարեան անկեալնոցը և եկեղեցական խորհուրդը օգնում են երիտասարդ ուսանողներին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

«Նոր-Դար»-ի №122-ից ի միջի այլոց իմացայ որ ս. Էջմիածնում հիմնուած մասնաժողովը իւր կազմած նախագծի մէջ իբրև նիւթ մատնանիշ է անում իմ «Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ» ընդհանուր ընտրական կանոնների նախագիծը։

Բանն այն է, որ Նորին Վեհափառութիւնը յիրաւի ինձ հրամայել էր ընտրական կանոնների նախագիծ կազմել։ Թէև ես վաղուց խոստացել էի էլ երբէք չվառնուել ոչ ազգային գործե-

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԱՆԴԱՅԻ

Գրեց Ս. Մսոցքսմ

Գլուխ 12 որտարդրդ

Ամեն տարի, երբ գարունը գալիս էր, Ստեփանոսը ամբողջ օրերով չէր երևում տնից դուրս։ Ամբողջ օրերով նա ման էր գալիս անտառներում, ձորերում, սարերում, ուր ծաղիկներ էին բուսնում։ Ինչ որ ծաղիկ տեսնում էր, ուր որ ծաղիկ էր բուսնում, նա գնում էր, քաղում էր, ծաղկեփունջ էր անում։ Ամեն տարի գարնանը նա ծաղկեփունջերով էր լցնում իր սենյակը։ Ամեն տարի գարնանը նա ծաղկեփունջերով էր զարդար

Ա. Ա.

ՂԱՄԱԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ

(«Տոր-Գաղթ»-ի թղթակցութիւն)

Կ.Պոլիս, 2 սեպտեմբերի.—Ինչպէս ան-ցեալ տարուայ մեր թղթակցութեանց մէջ յիշեցինք, սոյն թղթակիցը ամառ մը անցուցած է Պոլսոյ մօտերը գտնուող Պույուք-տէրէ գիւղաքաղաքը, ուր ամառնային օդափոխութեան համար կ՚երթան Պոլսոյ շատ մը ընտանիքներ։ Ինչպէս ամէն տարի, դարձեալ այս տարի ալ Պույուք-տէրէ հաւաքուած է եղեր 1848—49 թուականներուն ազգային մեծ գործունէութեան մէջ ներգործած անձերէ մեծ մասը։ Ներկայ գրութեան հեղինակը ինքն ալ այդ տարի հոն գտնուելով, ունեցած է առիթ անոնց հետ անձնական ծանօթութիւն մը ընելու եւ անոնցմէ շատերուն հետ ամէնօրեայ յարաբերութեան մէջ գտնուելու

փառաւոր պատերազմի մասնակիցները, և վերջապէս առանձին պատգամաւորութիւնները ռուսաց զօրաբանակի այն մասերի, որոնց չարքերում բուլղարական զինուորներն ևս հերոսաբար կռւում էին իրենց ազատութեան համար,—դանք Բուլղարիա մասնակցելու պատմութեան մէջ անօրինակելի ազատարար մեծ պատերազմի 25-ամեայ տարեդարձի հանդէսին: Այն ժամանակից ի վեր անցած մի քառորդ դարից յետոյ նորից ձեռք-ձեռքի տուած միանում են ռուսաց զօրաբանակի մասերը բուլղարական պատանի եղբայր-զօրքի հետ, բայց այս անգամ բացառապէս սրբազան խաղաղ մրցակցութեան նպատակներով: Ռուս և բուլղար զինուորական ոյժերը միացել են, որպէսզի բալկանների ատրոտում կանգնեցրած սուրը տաճարում միացնեն իրենց աղօթքները անմոռանալի Ազատարարծարի մաքուր հոգու և անձնազոհաբար ընկած հերոսների հոգիների հանգստութեան համար և աղօթեն, որ Ամենարարձրեալը նոր աջողութիւն և բարգաւաճումն շնորհէ իմ Օգոստափառ Պետի սրտի համար թանկագին Բուլղարիային: Ձերդ արքայական բարձրութիւնը պայծառ և փառաւոր գոյներով նկարագրեց այն ծանր ժամանակում և յետագայ ժամանակներում, ռուս հրանգիչների զեկավարութեան տակ, իշխանապետութեան զինուորական ոյժերի զարգացման սկզբնաւորութեան պատկերը: Ինձ վիճակուեց այս օրերս անձամբ ականատես լինելու ձերդ արքայական բարձրութեանը յանձնուած բուլղարական զօրքի փառաւոր յաջողութիւններին, մի զօրք, որ պահպանել է իր ռուս զաս տիարակիչների աւանդութիւնները: Թագաւոր Կայսրի հարձրագոյն անունից Ես բարձրացնում եմ բաժակը խրմելով բուլղարական քաջ զօրաբանակի առողջութեան, բարօրութեան և բարգաւաճման կենացը»: Բուլղարական զինուորական մինստր Պապրիկովը խմեց ռուսաց զօրաբանակի կենացը: Ընդունհատ Մեծ Իշխանը նորից խմեց Իշխան Ֆերդինանդի, Իշխան-Թագաժառանգի և բուլղարական զօրաբանակի կենացը:

Մեծ Իշխանը և իշխան Ֆերդինանդը մեկնեցին Բուրգաս: Մինիստր Կուրոպատկինը մեկնեց Պլեւնա:

ՀԻՆ ՁԵԳՈՐՔ.—Զինուորական մինիստր Պապրիկովի ճառից յետոյ Ձէյնովոյի զինուորական բանկում սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած հանդիսաւոր նախաճաշի ժամանակ Մեծ Իշխանն արտասանեց հետեւեալ խօսքերը, որոնք ընդհանուրը ոգեւորութիւն յարուցին. «Ձերդ արքայական բարձրութիւն, Բարձրագոյն հրամանով ուղարկուած և ձեր հրաւիրած անձերի ու իմ կողմից սրտագին շնորհակալութեամբ խմում եմ ձերդ արքայական բարձրութեան, իշխան Բորիսի, ձեր օգոստափառ ընտանիքի, բուլղարական եղբայր-ժողովրդի և բուլղարական քաջ զօրաբանակի կենացը»:

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ.—«Կազբէկ» լրագրի հրատարակութիւնը, որ դադարած էր օգոստոսի 28-ին, այսօր վերսկսուեց խմբագրութեան նոր կազմով:

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ.—Այսօր, առաւօտեան ժամը 11-ին, Նոյին Մեծութիւնները Մալայա Յարսկայա նաւամատոյցից հաճեցին մի քանի ժամով մեկնել Բախչիսարայ: Նաւամատոյցում հաւաքուած էին վարչական բոլոր անձերը:

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ.—Երեկ, երեկոյեան ժամը 8-ին, Կայսերական «Ստանդարտ» զբօսանաւի վրայ կայացաւ բարձրագոյն ճաշ, որին հրաւիրուելու արժանացել էին զօրաբանակի և նաւատորմղի գլխաւոր ներկայացուցիչները և Օգոստայի դատական պալատի նախագահ Գաւրիլով:

ՎԼՐՉԱՒ.—Տեղական թերթերի ասելով, կազմուել է ամերիկեան գրամատէրերի մի ընկերութիւն, որ ուզում է ելեկտրական երկաթուղի շինել Վարշաւի և Լոձի միջև:

ԼՈՆԴՈՆ.—Բանկային դիսկոնտը բարձրացած է 3-ից մինչև 4%.

Կ. ՊՈԼԻՍ.—Թրքական արտակարգ մի դեսպանութիւն ողջունելու է Ռուսաց Կայսրին Նրա Լիւդիայում եղած միջոցին:

Կ. ՊՈԼԻՍ.—Մեծ Իշխանը «Գէորգի Պարեգոնոսից» զրահանաւով գալիս է այստեղ վաղն երեկոյեան: Թուրքերի կողմից պատրաստուում են արտակարգ ընդունելութիւն և պատիւներ տալու նրան: Զրահանաւի վրայ ողջունելու են արտաքին գործերի մինիստրը և ուրիշ մեծամեծներ: Ելդըզ-Քէօշկում ընդունելութիւնը տեղի կունենայ Մեծ Իշխանի ժամանումից անմիջապէս յետոյ: Ուրբաթ սելամլըքից յետոյ, տեղի կունենայ մեծ զօրահանդէս և հանդիսաւոր ճաշ. հետեւեալ օրերը տեղի կունենան ուրիշ հանդէսներ բարձր հիւրի պատուին:

Սեպտեմբերի 20-ից

Կ. ՊՈԼԻՍ.—Սելանիկի վալին զեկուցանում է, որ Վոլոնի գաւառի Եօվաչիկ գիւղի բնակչութիւնը, որ հետացել էր լեռները, վերադարձել է իր բնակարանները: Վտանգի ենթարկուած մահմեդական և քրիստոնեայ չաս գիւղերի խնդիրները յարգուած են: Մոնաստիրի վալին զեկուցանում է, որ զօրքերը հետամուտ են լինում բուլղարական հրոսակախմբերին: Երկու վալին ևս յոյս են յայտնում, որ իրենց կաշողուի շուտով ճնշել աւազակային գործողութիւնները: Թիւրքիայի կողմից լուրջ սիջոցներ են ձեռք առնուած հրոսակախմբերի գործողութեանց զեկավար փոխ-գնդապետ Եանկովի . գէմ, որը, ինչպէս լսում է, գտնւում է Մոնաստիրի վիլայէթում: Ըստ թրքական պաշտօնական ծանուցումների, վիլայէթների գրութեան վերաբերեալ օտարերկրեայ լրագրների հաղորդած տեղեկութիւնները խիստ չափազանցրած են: Հրոսակախմբերի գործողութիւնները ճնշել կարելի է չատ շուտով, սակայն քրիստոնեայ, մահմեդական և գիւղական բնակչութիւնը կաւարելագործէս խաղաղեցնելու համար հարկաւոր կըլայ երկար ժամանակ:

ԲՈՒՐԳԱՍ.—Ձէյնովոյից Բուրգաս գնալիս Մեծ Իշխանին դիմաւորում էին ցնծագին արամադրուած ժողովրդի բազմամարդ խմբեր, նրա ոտների առջ ցանկով ծաղիկներ և արտայայտելով նրան, իբրև Թագաւոր Կայսրի ներկայացուցչի, ամենաանկեղծ անձնուիրութեան զգացումներ: Ճամ ատեղում կանգնեցրած էին յաղթական կամարներ, զարդարուած ծաղիկներով, ռուս-բուլղարական դրօշակներով և համակրական մակագրութիւններով: Ձէյնովոյում Մեծ Իշխանի մեկնելիս բուռն ցոյցեր արուեցին. Կազանլըկում քաղաքապետը Մեծ Իշխանին ողջունեց ճառով և աղ ու հաց մատոյց Մեծ Իշխանը Բուրգասից մեկնեց բուլղարական ներկայացուցիչների ուղեկցութեամբ, որոնք ճանապարհ դրին նրան մինչև «Կուրանես» պահականաւը:

ԱԹԵՆՔ.—Մոնաստիրի յունաց հիւպատոս Բիթոլին հրամայուած է անյապաղ գնալ իր պաշտօնատեղին:

ՈՒԶԻՆԳՏՈՆ.—«Ցինցինատի» յածանաւի հրամանատարը յայտարարեց, թէ Պանամի նեղուցում ոչ մի գործողութիւն թոյլ չի տալ նոյն իսկ կանոնիր նաւակների կողմից, ում և պատկանելիս լինին այդ նաւակները, մի գնդակի անցնելիք տարածութեան վրայ սկսած երկաթուղու գծից, նաւազործարաններից և Պանամի երկաթուղու համար ապրանքներ ու ուղեւորներ բերող նաւերի խարիսխ ձգելու տեղից:

ՊԱՂՏԱԻ.—Կրեմենեչուղում սեպտեմբերի լոյս 17-ի գիշերը սպանութեան փորձ կատարուեց Դոնի կազակների 12-րդ գնդի 6-րդ հարիւրեակի հասուլ Փիլիմոնովի դէմ: Գնդէն երկու երեխաների հետ ուղարկելով Ռաֆիլովով, Փիլիմոնովն իւր եօթնամեայ տղայի հետ պատկից քնելու գիշերուայ ժամը մէկին: Բերեստով և Լեախովինով զինուորները լսեցին երեխայի ճիչը և, ներս մտնելով տեսան Փիլիմոնովին երեսն արիւնաթաթաւ: Դէմքի ոսկորները փշրուած են, ձախ աչքը հանուած է. գժբաղդն ուշքի չի գալիս, գրութիւնն անյուսալի է: Բարձի տակ կար 500 րուբլի, որը չքացել է: Փողի քսակը գտնուած էր բակի ջրհորում. նոյն տեղում գրանուած է երկաթի մի ձող—սպանութեան զէնքը: Երկու զինուորն էլ ձերբակալուած են:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ

ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը
կը ներկայացնէ

I.

ԿՐԵՉԻՆՍԿՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Կոմեդիա 3 գործ. հեղ. Սուխովո-Կոբըլինի, թարգ. Յ. Աբէլեանի և պ. Ա-բաքսեանի.

II.

ԳՈՎՏՈՐ ԹԱԹՈՍ

վոդեվիլ 1 գործ. փոխ. Ա Սարգարեան-Արեշատեանի.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ԽՈՒՄԲԸ,

ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ

Տեղերի գները սովորականն է...

Ռեժիսսօր Յ. ԱԲԵԼԵԱՆ

(1019) 1—1

ՀՐԱՒԷՐ

Ամսոյս 22-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի սէկին՝ լինելու է Վաճաց Աւագ Նկեղեցու ծխականների ժողով 1900 և 1901 թուականների հաշուեքննութիւնը ընելու: Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին՝ սրուշած օրը և ժամին շնորհք բերել նոյն եկեղեցին նշանակած գրաղմունքները մասնակցելու համար:

Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ՝
Գրիգորիս քահ. Երզնկեանց

(1015) 2—2

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառումն ևն

«Վիսկասար բառարան ռուսերէնից հայերէն», կազմեց Յ. Դաղբաշեան, պրակ առաջին (բոլոր կը լինի 10 պրակ) 1 ր: Բաժանորդագրութիւն նոյն բառարանի 6 ր.

«Համառօտ կենսագրութիւն Միքայէլ Նալբանդեանցի (1830—1866), գինն է 15 կ.

«Երեխայի մարդիկ» (փոքրիկ կենսագրութիւններ) Էէօյի, գ. 15 կ.

«Գրակ» և «Մելանիա» Զիրվանզադէի, գ. 80 կ.

«Համլէտ», Շէքսպիրի, պատկերով, թարգմանութիւն Դ. Բաքադեանի, գ. 1 ր.

«Շէքսպիր և իր Համլէտ ողբերգութեան ազբիւրն ու քննադատութիւնները», Պ. Ոզամեանի 1 ր.

«Ի՞նչ է կաշուի հիւանդութիւնը», բժ. Ա. Բուդուկեանի—15 կ.

«Թոքախտ կամ բարակացաւ», «Էնֆլուէնցիա» և «Վարակիչ հիւանդութիւններ», բժ. Արծր. 23 կ.

«Կենսագրութիւն Հ. Ղ. Ալիշանի», պատկերազարդ, աշխ. Հ. Ս. Երեմ.—1 ր. 20 կ.

«Սահակ Պարթև», «Մեսրոպ Մաշտոց» և «Մահմէդ», կազմեց Ե. Թ.—17 կ.

«Մուրը դրոց հին ուխտի պատմութեան ընդարձակ աշխարհաբառը», աշխ. Գ. քահ. Մանդակունու—2 ր. 50 կ.

«Պատմութիւն հայոց դրականութեան, աշխ. Մտ. Պալասանեանի—90 կ.

«Բարեպաշտութիւնը», «Յուդայի վերջին գիշերը» և «Փարիսեայ», Խաչ. քահ. Փանհանի—30 կ,

«Պատկերազարդ այրուբէն, հրատարակութիւն իշխ. Մ. Թումանեանի—1 ր.

«Էմինեան ազգագրական ժողովածու», հատոր Ա., «Փշրանքներ Ջիրակայ ամբարներից», հաւաքեց Ազ. Մխիթարեանց—1 ր.

«Էմինեանց ազգագրական ժողովածու», հատոր բ., «Ժողովրդական վէպ և հէքիաթ», հաւաքեց Ս. Հայկունի—1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11. (992) 2—2

ՁՏԵՄՆՈՒԱԾ ԱՐԺԱՆՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՄԻԱՅՆ 10 ՕՐՈՎ

Սեպտեմբերի 20-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը

ԵՂԲ.

ԽՈՒԴԱՎԵՐԵԱՆՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹՈՒՄ

ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է

Անցեալ տարիների սովորութեան համեմատ՝ այս տարի եւս

ՁՏԵՄՆՈՒԱԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սեպտեմբերի 20-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը զբոսը ձմեռուայ հագուստների, որոնք առանձնայատուկ և վերջնական գներն նշանակուած են էտիկէտների վրայ կապոյտ մատիտով.

ստացուած է նոյնպէս

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԿԱՆԱՆՑ և ԵՐԵԽԱՅՈՑ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ, պատրաստուած ամենավերջին տարազով:

Ընդունում ենք նաեւ

Մեր սեպհական կտորներից ԱՄԵՆԱՅՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԻՐՆԵՐ թէ եւրոպական և թէ Փօրմեննից-աշակերտական ստացուած Արտասահմանեան եւ Ռուսական ամենայայտնի գործարաններից: Գների արժանութեան կողմից ոչ ոք չէ կարող մրցել:

(1017) 10—2

Телефонъ №

Лѣсопильный заводъ

Аршалуйсъ быв. Ананова

Михайловскій просп. № 68, въ Тифлисѣ.

ПРОДАЖА

СУХИХЪ ЛѢСНЫХЪ МАТЕРІАЛОВЪ РАЗНЫХЪ ПОРОДЪ:

сосновыхъ, еловыхъ, карагачевыхъ, липовыхъ, ольховыхъ, кленовыхъ, чинаровыхъ, орѣховыхъ, дубовыхъ и ясеневыхъ досокъ и реекъ, также багдадки и березовые дручки.

ПРИНИМАЮТСЯ ЗАКАЗЫ ПО УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ.

(1018) 10—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ջաննելիններորդ տարի

Առեւտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Ուսուցումները ստանում են առանձնատներ:

Ասնդրելի առարկաները սրանք են. 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առեւտրական Իրաւագրութիւն, 6) Առեւտրական և մաբտակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն (վատ ձեռքի—почеркъ—ուղղելը): Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 16-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրխպանովի տանը, №9, Լերմոնտովսկայա փողոցում: Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԵՍ** կուրսեր հիմնողի տանը: Օտարպարտարացիք դիմում են՝ Въ Тифлисъ, С. П. Мануэльяну.

Ձրի ուսուցումն ցանկացողներին զրոյ մեբեճայի վրայ: Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր: (970) 25—20

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Դրմամ և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում: Այս հեղուկի մէջ չհաղորդուած են պերուանեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ գարմանալի սերտով բժշկում է հոնորէյը (սերմնահեղութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաչափական հոչակ է կտացել: Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմահեղութիւնները:

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:

(M.) № 204467 24—13

Дозвол. ценз. Тифлисъ, 20-го сентября 1902 г. Տպարան ընկ. «Վերեիչև և Կամենմախեր» Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ“, Михайловск. пр., № 81. Телеф. № 852